ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԷՆ ՀՄԱԾՁԲ-21/29 93-21

ք.Երևան «31» մարտի 2021 թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա.Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՏԻԿԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գևորգ Մուրադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տոնավաճառների և ցուցահանդեսների կազմակերպման ծառայությունների /Դուբայ ԷՔՍՊՈ 2020/ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների /1165 ներդրումների և արտահանման խթանման ծրագրի՝ 11005 «Դուբայ ԷՔՍՊՈ 2020» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովման միջոցառման շրջանակներում/:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 /երկու/ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **79 296 000 (յոթանասունինները միլիոն երկու հարյուր իննսունվեց հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և տարածվում է Կողմերի միջև փաստացի 2021 թ-ի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Պայմանագիրը գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	«ՄԵՏՐԻԿԱ» ՍՊԸ
ք.Երևան, Մ.Մկրտչյան 5	ք.Երևան, Լալայանց 47ա, բն.17
Հ/Հ 900011037133	h/h 2050022488341001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ 02679111
	տնօրեն
Ա.Խաչատրյան	Գ.Մարգարյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« 31 » մարտի 2021 թ. կնքված
ՀՀ ԷՆ ՀՄԱԾՁԲ-21/29 ծածկագրով պայմանագրի
ՑՑ - 21

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ /	Մատուցման ժամկետ	
				սկիզբ	ավարտ
1	Տոնավաճառների և ցուցահանդեսների կազմակերպում (Դուբայ-ԷՔՍՊՈ 2020)	Ծառայություն մատուցողը պետք է իրականացնի Դուբայ-ԷՔՍՊՈ 2020 ցուցահանդեսի կազմակերպումը համաձայն ՀՀ վարչապետի 2018 թվականի օգոստոսի 7 N 1058-Ա որոշման: 2021 թ-ի մարտից մինչև օգոստոսի 31-ը կատարողը պետք է մատուցի հետևյալ ծառայությունները՝ **1. Լոգիստիկա** • Հովանավորների/ գործընկերների/ մատակարարների ցանկի թարմացում • Հովանավորների/ գործընկերների/ մատակարարների հովանավորչական/գործընկերային փաթեթների թարմացում • Հանդիպումներ և բանակցություններ (վերսկսում) հովանավորների/ գործընկերների/մատակարարների հետ • Հովանավորների/գործընկերների/մատակարարների ցանկի վերջնականացում • Հովանավորչական/գործընկերային/մատակարարման պայմանագրերի մշակում • Պայմանագրերի կնքում հովանավորների/գործընկերների/մատակարարների հետ • Տաղավարում ներկայացվող/վաճառվող ապրանքների ցանկի մշակում (Կոմերցիոն առաջարկ)	**79 296 000**	2/1/2021 2/15/2021 2/15/2021 3/12/2021 3/12/2021 3/12/2021 3/19/2021 3/26/2021	2/15/2021 2/19/2021 3/12/2021 3/19/2021 3/19/2021 3/26/2021 4/7/2021

		• Կոմերցիոն առաջարկի ներկայացում Դուբայի թիմին • Գործառնական նյութերի/իրերի (operational items) ցանկի ստեղծում • Բեռնափոխադրման պլանի կազմում • Բեռնախցիկների ժամանման ամսաթվի վերջնականացում (ապրիլի վերջ-քննարկելի) • Բեռնափոխադրման փաստաթղթերի պատրաստում • Տեղափոխվող ապրանքների փաթեթավորում և փոխադրում բեռնախցիկ		4/7/2021 2/15/2021 4/12/2021 Առաջին եռ. 4/12/2021 Առաջին եռ. ավարտ	4/12/2021 3/15/2021 4/16/2021 Առաջին եռ. 4/30/2021 Առաջին եռ.ավարտ
		2. **Հաղորդակցություն և ՁԼՄ-ների հետ կապ**			
		• Սոցիալական կայքերում Հայաստանի տաղավարի էջերի առաջխաղացման տենդերի տեխնիկական առաջադրանքի թարմացում • Առաջխաղացման աշխատանքային պլանի մշակում • Առաջխաղացման աշխատանքների մոնիթորինգ (աշխատանքային պլանի և EXPO 2020 Dubai-ի ուղեցույցների համապատասխանության վերահսկողություն) • Կոմունիկացիոն արշավների մոնիթորինգ, արդյունքների ամփոփում և վերլուծություն • Հաղորդակցության և ՁԼՄ-ների հետ կապի պատասխանատուի գրանցում Tawassul պորտալում • Մամլո ծառայություն, ասուլիսների և հարցազրույցների մոնիթորինգ • Կոմունիկացիոն ռազմավարության մշակում և իրականացում • EXPO 2020 ցուցահանդեսի տարածքում Հայաստանի ՁԼՄ-ների հավատարմագրման, հարցազրույցների պլանավորման, ձայնագրման, մոնտաժի և հեռարձակման ստուդիաների ամրագրման, ինչպես նաև ՁԼՄ-ի աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ քայլերի նախապատրաստում և իրականացում • EXPO 2020 մեդիա թիմի կողմից պատրաստած նյութերի տարածում Հայաստանի ՁԼՄ-ներին • EXPO 2020 մեդիա կենտրոնի հետ փոխգործակցություն • Միջոցառումների ամրագրման համակարգում գրանցում (միջոցառումների հանրայնացում) • PR և մարքեթինգային միջոցառումների իրականացում և մոնիթորինգ, հովանավորչական/գործընկերային փաթեթներում ներառված PR և մարքեթինգային նյութերի արտադրություն		2/15/2021 3/15/2021 2/2/2021 Երկրորդ եռ. սկիզբ ընթացիկ Երկրորդ եռ.ավարտ ընթացիկ 2/15/2021 3/1/2021 2/19/2021 Ընթացիկ 3/13/2021	2/19/2021 4/15/2021 4/15/2022 Երկրորդ եռ.սկիզբ ընթացիկ Երկրորդ եռ.ավարտ ընթացիկ 4/15/2022 4/15/2022 3/10/2021 ընթացիկ 3/15/2021

		• Լրացուցիչ՝ Հաղորդակցության և ԶԼՄ-ների հետ կապի պատասխանատուի օգնականի/տեղակալի նշանակում		2/1/2021	2/15/2021
		3. Արտահանում և ներդրումներ			
		• «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսի անցկացման օրերի քննարկում և ամրագրում Դուբայ էքսպո կենտրոնում		3/1/2021	5/31/2021
		• «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսի կոնցեպտի մշակում, ներկայացում EXPO 2020 Dubai-ի թիմին		3/1/2021	5/31/2021
		• Բանակցություններ Դուբայ էքսպո կենտրոնի թիմի և հավանական մատակարարների հետ		3/1/2021	5/31/2021
		• Ծախսերի վերջնահաշվարկ. մասնակցության վճարի վերջնականացում		6/1/2021	6/30/2021
		• Առաջխաղացման և մասնակցության փաստաթղթերի ստեղծում (հայտի ձևանմուշ, առաջխաղացման նյութեր և այլն)		6/1/2021	12/31/2021
		• Միջոցառման առաջխաղացում սոցիալական ցանցերի, PR միջոցառումների, Էկոնոմիկայի նախարարության միջոցով		2/15/2021	5/31/2021
		• Թեմատիկ շաբաթների (թեմատիկ բիզնես ֆորումների) վերջնականացում, որոնց մասնակցելու է Հայաստանը		5/31/2021	6/2/2021
		• Հետաքրքրության հայտի ներկայացում Բիզնես ֆորումին		6/2/2021	6/15/2021
		• Մասնակցության շրջանակի վերաբերյալ քննարկումներ և վերջնական համաձայնության ձեռքբերում		6/15/2021	6/30/2021
		• Հնարավոր խոսնակների/ստարտափերի/փոքր և միջին ձեռնարկությունների որոշում		7/1/2021 2/1/2021	7/9/2021 9/1/2021
		• Բիզնես ֆորումների մասնակցության առաջարկի մշակում		2/15/2021	3/1/2021
		• B2B պորտալի դասընթացների մասնակցություն			
		• Հայաստանի տաղավարի պրոֆիլի ստեղծում B2B պորտալում		3/26/2021	-
		• Հովանավորների/գործընկերների/թիմի անդամների գրանցում B2B պորտալում		5/1/2021	9/15/2021
		• Հայաստանի տնտեսության սեկտորալ ներդրումային գրավչության ուսումնասիրություն		3/1/2021	5/1/2021
		• Ներդրումային նախագծերի թարմացում		7/1/2021	10/1/2021
		• EXPO 2020 Dubai-ի ընթացքում ներդրումային նախագծերի ներկայացման շրջանակի վերջնականացում		2/15/2021	10/9/2021
		• Ներդրումային նախագծերի բիզնես պլանների մշակում		4/1/2021	4/1/2022
		• Բիզնես հանդիպումների կազմակերպում		2/1/2021	2/15/2021

		4. «Ազգային օր»			
		• «Ազգային օր» միջոցառման օրվա ամրագրում		2/15/2021	12/31/2021
		• Պաշտոնական պատվիրակության անդամների հստակեցում		2/15/2021	1/29/2022
		• «Ազգային օր» միջոցառման մոնիթորինգ		6/1/2021	12/31/2021
		• Համապատասխան բովանդակության ստեղծում			
		5. Այլ			
		• Բանակցություններ պոտենցիալ գործընկերների հետ հատուկ միջոցառումներին հյուրասիրություն կազմակերպելու նպատակով		3/1/2021	7/9/2021
		• Գործընկերների կողմից սննդի տրամադրման վերահսկողություն/մոնիթորինգ		7/9/2021	9/15/2021
		• Տաղավարի 2-րդ հարկում հատուկ հյուրերի համար միջոցառումների կազմակերպում (հյուրասիրություն, համտես, քեթրինգ)		3/1/2021	9/15/2021
		• «Հայ խոհարարական ավանդույթների զարգացում և պահպանում» ՀԿ-ի շեֆ խոհարարի և նախագահի ուղևորության պլանավորում Դուբայ՝ «Խոհարարական փորձ»-ում հայկական 2 բաղադրատոմս պատրաստելու նպատակով խոհարարների վերապատրաստում իրականացնելու համար		3/15/2021	4/15/2021
		• Վիզաների ստացման և ակրեդիտացիայի նպատակով ցուցակների կազմում՝ հովանավորների, գործընկերների, մատակարարների, անձնակազմի, հատուկ հյուրերի և պատվիրակների		5/1/2021	3/1/2022
		• Ցանկի բոլոր անդամների գրանցում EXPO 2020 Dubai-ի պորտալում		2/15/2021	9/1/2021
		• Ցուցահանդեսի օրերին Հայաստանի տաղավարում աշխատող թիմի անդամների ցուցակի կազմում			
		• Կացության իրավունքի և ապահովագրության ստացման համապատասխան ընթացակարգերի և փաստաթղթերի կազմակերպում 2 (+1) աշխատակցի համար		5/1/2021	8/1/2021
		• Վիզայի հավատարմագրման ընթացակարգերի մոնիթորինգ		5/1/2021	5/21/2021
		• Expo Village-ում Հայաստանին հատկացվող տարածքի հետ կապված բանակցություններ		6/1/2021	3/1/2022
		• Digital Expo-ի գործունեության մոնիթորինգ		6/1/2021	8/1/2022
		• Մասնակիցների միջազգային հանդիպումներին (IPMs) մասնակցություն		Երկրորդ եռ	Երկրորդ եռ
		• Համապատասխան փաստաթղթեր			
		• Ֆինանսական և հարկային ծառայությունների մոնիթորինգ		2/15/2021	10/1/2021
		• Աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ ՀՀ կառավարության և		2/1/2021	5/15/2022
				5/1/2021	4/1/2022

		այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ		2/1/2021	10/1/2021

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011037133
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604

Ա.Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԵՏՐԻԿԱ«» ՍՊԸ
ք.Երևան, Լալայանց 47ա, բն.17
հ/հ 2050022488341001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02679111
տնօրեն

Գ.Մուրադյան
(ստորագրություն) Կ.Տ.

"ՄԵՏՐԻԿԱ"
"МЕТРИКА"
"METRICA"
02679111

Հավելված N 2
« 31 » մարտի 2021թ. կնքված
ՀՀ ԷՆ ՀՄԱԾՁԲ-21/29 ծածկագրով պայմանագրի
93-21

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/Հ	Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	բյուջետային ծախսերի տնտես. դասակ. հոդվածը*	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	Տոնավաճառների և ցուցահանդեսների կազմակերպում (Դուբայ-ԷՔՍՊՈ 2020)	4239	-	-	72 296 000	72 296 000	72 296 000	72 296 000	72 296 000	72 296 000	72 296 000	72 296 000	72 296 000	72 296 000	**72 296 000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011037133
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604

Ա.Մնացականյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԵՏՐԻԿԱ» ՍՊԸ
ք.Երևան, Լալայանց 47ա, բն.17
հ/հ 2050022488341001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02679111
տնօրեն

Գ.Մոսրոյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
« 31 » մարտի 2021թ. կնքված
ՀՀ ԷՆ ՀՄԱԾՁԲ-21/29 ծածկագրով պայմանագրի
93-21

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 31 » մարտի 2021 թ. կնքված
ՀՀ ԷՆ ՀՄԱԾՁԲ-21/29 ծածկագրով պայմանագրի
93-21

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն